

## ՀԱՄԱՌՈԾ ԱԿՆԱՐԿ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ-ԼՈՒՍԱԿՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՕՍՄԱՆՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

//

Արեւմտահայ դպրոցների պահպանման եւ զարգացման գործում իրենց անգնահատելի դերն ու ծառայութիւններն ունեն Մխիթարեանները։ Նրանք իրենց կրթական ու դպրոցաշինական արգասաբեր գործունէութիւնը ծաւալել են ինչպէս Կոստանդնուպոլսում եւ Արեւմտեան Հայաստանի գաւառներում, այնպէս էլ Եւրոպայում եւ Թուրքիայի հայաշատ բնակավայրերում։ Հետեւաբար, երբ անդրադառնում ենք հայ դպրոցի պատմութեան զարգացման խնդիրներին, այս իրողութիւնը չպէտք է անտեսել, քանի որ հայ դպրոցի պատմութեան հարուստ գանձարանում Մխիթարեաններն ունեն իրենց պատուաւոր եւ առանձնայատուկ տեղը։

### ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ – ՄՈՒՇ

1891ին Մուշի հայ կաթոլիկ համայնքը, իբրեւ Տարօնի եւ Վասպուրականի եպիսկոպոս, միաձայն ընտրեց եւ եկեղեցական սինոդին ներկայացրեց Հայր Ներսէս Ճնտոյեանի թեկնածութիւնը։ Հաւանաբար, մշեցիք չէին սխալուել իրենց ընտրութեան մէջ, քանի որ նրանք քաջատեղեակ էին այս եռանդուն եւ տոկուն վարդապետի՝ Պարտիզակում ծաւալած ութը տարիների կրթական ու դպրոցաշինական բեղուն գործունէութեանը։ 1892 թուլիսի 24ին նա ճեռնադրուեց եպիսկոպոս եւ նոյն աւիւնով ճեռնամուխ եղաւ նաեւ Մուշի կրթական ու դպրոցական գործի բարեփոխման աշխատանքներին, քանի որ ամբողջ շրջանը խարխափում էր համատարած տգիտութեան ու խաւարի մէջ։ Միակ լուսաւոր կէտը, որը նրան ոյժ էր ներշնչում, դա ժողովրդի անկեղծ սէրն ու վատահութիւնն էր իր հանդէպ։ Ինը երկար ու ձիգ տարիներ էին պէտք, որ նա կարողանար հիմնովին նորոգել Մշոյ, Առինջի, Նորաշէնի, Օղունքի եւ միւս գիւղերի կիսաքանդ

**Եկեղեցիներն ու դպրոցները եւ կանոնաւոր հունի վրայ դնել կրթութեան ու դպրոցաշինութեան գործը:**

Առաջին իսկ օրուանից Մխիթարեան միաբանութիւնը Հայր Ներսէսին աջակցել է թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս՝ այստեղ գործուղելով գրադէտ եւ բանիմաց միաբանների, որոնք, իրենց քահանայական պարտականութիւններից բացի, անտրունջ կատարել են նաև ուսուցչի բարդ ու դժուարին պարտականութիւնները, կրթել ու դաստիարակել են հարիւրաւոր հայ մանուկների։ Մշոյ կրթական գործին նոր թափ հաղորդելու նպատակով 1898ին Հ. Ներսէսը խնդրագիր ներկայացրեց Վենետիկի Մխիթարեան միաբանութեան Աբբահօրը, որպէսզի այսուհետ ինքը ստանձնէր Մշոյ եւ նրան յարակից գիւղերի ու աւանների դպրոցների վերատեսչութեան գործը։ Մխիթարանութիւնը, նոյն թուականի Դեկտեմբերի 27ին քննութեան առնելով եպիսկոպոսի աղերսագիրը, սիրով ընդառաջեց նրան՝ «Եղած խնդրանքն առ ի փորձ» նկատելով, եւ նրան յատկացրեց դպրոցաշինութեան համար լրացուցիչ գումարներ այն պայմանով, որ նորակառոյց Մայր դպրոցը անուանակոչուէր «Մխիթար Մուրատեան», քանի որ 1000 ֆրանկը յատկացուել էր Մուրատեան վարժարանի կողմից։ Մխաժամանակ Հայր Անանիա Գոնտաքճեանը նշանակուեց Մշոյ դպրոցների մատակարար, իսկ Հայր Սարգիս Յովսէկինանը՝ շըրջակայ գիւղերի դպրոցների տեսուչ-ուսուցիչ։ Բնականաբար, այս ամէնը նոր լիցք հաղորդեցին կրթական ու դպրոցաշինական գործին։ Առաջին հերթին բարեկարգուեցին ինչպէս Մուշի Մայր վարժարանը, այնպէս էլ Առինջի, Նորաշէնի եւ Օղունքի դպրոցները։ Դրանք բոլորն էլ անուանակոչուեցին «Մխիթար Մուրատեան» դպրոցներ։

1899ը Մուշի համար լուսաւորութեան եւ դպրոցի արմատական վերակառուցման շրջան էր, քանի որ սկիզբ առաւ կըրթական հզօր շարժում Մուշում եւ նրան յարակից գաւառներում։ 1901ին Մուշի բարձր նախակրթարանն արդէն ունէր 160-200 աշակերտ, որտեղ պաշտօնավարում էր արտաքին<sup>1</sup> եւ ներքին տասուսուցիչ<sup>2</sup>։ Աշակերտները, կրօնագիտութիւնից եւ նախնական գիտելիքներից բացի, խորացան հայերէն, տաճկերէն, ֆրանսերէն

1 Արտաքին ուսուցիչների կազմը հետեւեալն էր՝ Գալուստ Անդրեասեան, Հլպատ Կարապետեան, Գեղամ Կարապետեան եւ ընդհանուր հսկող Նիկողայոս Պերպերեան, Վահան Փոսբեյեան, Ցակար Կարթեցի եւ Բարսեղ Գասպարեան, իսկ տեսուչն էր Հ. Անանիա Գոնտաքճեանը։

2 Տե՛ս «Ճերիտէի Շարգիյէ», թիւ 4916, 10 Օգոստոս, Կ. Պոլիս, 1901։

Եւ իտալերէն լեզուների իմացութեան մէջ: Նորաշէնի դպրոցի տեսուչ նշանակուեց Հայր Ստեփան Զահրեանը, իսկ դպրոցի հիմնական ուսուցիչը լեզուագէտ-հայկաբան Վահան Աբրահամեանն էր: Ըստ վիճակագրական տուեալների՝ 1901ին դպրոցում սովորում էր 100 երեխայ: Մեծ յաջողութիւնների էր հասել նաեւ Առինջի նախակրթարանը: Այստեղ սովորում էր 50-60 աշակերտ: Առինջի դպրոցի ուսուցիչը Միխիթարեան դպրոցի շորջանաւարտ Պետրոս Մանասեանն էր: Դպրոցում բաւականաչափ լաւ հիմքերի վրայ էր դրուած լեզուների ուսուցումը: Օղունքի նախակրթարանը նոյնպէս նկատելի առաջընթաց ունեցաւ: Այստեղ սովորողների թիւը աննշան տատանումներով հասնում էր 20-30ի: Օղունքի նախակրթարանի ուսուցիչը՝ Գասպար Միլեթպաշեանն էր: Այսպիսով՝ Տարօնի Միխիթարեան-Մուրատեան վարժարաններում միասին վերցրած կրթութիւն եւ դաստիարակութիւն էին ստանում 370-390 երեխայ:<sup>3</sup>

Մատնանշենք նաեւ, որ արդէն 1901ից սկսած Մուշի Մայր վարժարանը հօգոր մրցակից էր դարձել հայկական միւս դպրոցների համար: Այդ մասին «Մշակ»ը արձանագրում է. «...քազմաքիւ ծնողներ տեսնելով այդ դպրոցին ուսումնական եւ բարոյական յառաջադիմութիւնը, իրենց զաւակները միւս դպրոցներէն հանելով՝ հոտ կը դնեին»<sup>4</sup>.

Կարծում ենք, որ կրթական այս շօշափելի տեղաշարժերը Տարօնում եւ նրա մերձակայ գիւղերում ու աւաններում իրենց բարերար ազդեցութիւնը պէտք է թողնէին նաեւ հայ բնակչութեան բարոյական եւ նիխթական կենսամակարդակի բարձրացման վրայ: Եւ եթէ նկատի առնենք, որ Օսմանեան կառավարութիւնը բուն Արեւմտեան Հայաստանում եւ Թուրքիայի հայաշատ ծայրագաւառներում վարում էր հայտեաց կոչտ քաղաքականութիւն, որի արդիւնքում հայ ժողովրդի արեւմտեան հատուածը յայտնուել էր սոցիալ-տնտեսական, հասարակական-մշակութային ծայրաստիճան թշուառ եւ անմիխթար կացութեան մէջ, ապա առանց երկմտելու կարող ենք ասել, որ Միխիթարեանների ծաւալած դպրոցաշինական եւ կրթական բազմաբեղուն գործունէութիւնը, այդ բնագաւառում նրանց խոշոր ձեռքբերումները, անլուր զոհողութիւններն ու անմնացորդ նուիրումը դպրոցական ու կրթական գործին, իսկապէս արժանի են բարձր երախտիքի ու գնահատանքի:

3 Տե՛ս «Մեհմուայի Ախապար», թիւ 3825511, 24 Ապրիլ, Կ. Պոլիս, 1901:

4 Տե՛ս «Մշակ» օրաբերք, Կ. Պոլիս, 1901:

## ՆԻԿՈՄԻԴԻԴԻԱԾ

**Նիկոմիդիայում (Խզմիթ) <sup>5</sup> Միսիթարեանները հաստատուել են ժԹ. դարի վերջերին։ Նրանք իրենց առաջին դպրոցը բացե-**

- 5 Նիկոմիդիան (Խզմիթ) գտնուում է Միջերկրական ծովի Մարմարայի ծովախորշի ափին։ Այն եղել է գաւառական կենտրոն, որն ուներ վեց գաւառներ, որոնք բաժանուած էին գիւղախմբերի։ Նիկոմիդիան Թռարքիայի հայաշատ բնակավայրերից մէկն էր, որտեղ հայերը բնակութիւն էին հաստատել դեռևս ԺԵ.-ԺԶ. դարերից։ Այստեղ հայկական գիւղաքաղաքներից յայտնի էին Աղարազարը, Պարտիզակը, Օվազըկը, Յուլովան, Արսլան Բեկը, Խասկալը եւայլն։ ԺԷ. դարի վերջերից Խզմիթում կազմառուեց հայ եկեղեցու քեմ՝ առաջնորդարան։ Հայերն այստեղ հիմնականում զրադաւել են հողագործութեամբ, արհեստներով եւ առեւտրով։ Խզմիթը Կ. Պոլսի հետ հաղորդակցւում էր քէ՛ երկարուղային քէ՛ ծռվային ճանապարհով։ Հայկական կրթական շարժումն այստեղ սկսուել էր դեռևս ԺԷ.-ԺՅ. դարերում, իսկ աշխարեխիկ դպրոցները կազմառուեցին ժԹ. դարի առաջին կէսին։ ԺԹ. դարի առաջին կէսին այստեղ հիմնուեց «Լուսաւորչեան ընկերութիւն»ը (1840), որի հիմնական նպատակը հայերի մէջ դպրոցների, մատենադարան-ընթերցարանների, մամուլի միջոցով լուսաւորութիւն տարածելն էր։ Հիմնուեցին նաև «Կիրակնօրեայ դպրոց», «Մատենից քանօգարան», «Ընթերցասիրաց ընկերութիւն» եւայլն, իսկ 1860ին արդէն գործում էր երկսեռ վարժարան, որտեղ սովորում էին 200 աղջիկներ եւ 400 տղաներ։ Խզմիթի հայկական հնագոյն գիւղերից մէկը Պարտիզակն (Բաղչեցիկ) է։ Այն հիմնադրուել է ԺԶ. դարում Սերաստիայի Պարտիզակ գիւղից գաղթած հայերի կողմից։ Այստեղ առաջին դպրոցը բացուել է 1823ին, որը գործում էր գաղտնի։ Խսկ առաջին կանոնաւոր դպրոցն այստեղ սկսել է գործել 1833ին։ Ստեփան Տառեանի նախաձեռնութեամբ ժԹ. դարի 40ականներին սկիզբ առաւ նաև աղջիկների կրթական շարժումը։ Մինչեւ ցեղասպանութիւնը Պարտիզակում բնակուում էր 17000 հայ։ Պարտիզակը եղել է հայ առաջադէմ մտքի կենտրոն։ Տարեկ ժամանակաշրջաններում Պարտիզակում գործել է ուր-դպրոց, որոնցից մէկը եղել է բարձրագոյն։ Մինչեւ ցեղասպանութիւնը երատարակուել են «Փարոս», «Պայքար», «Մեղու» պարբերացերեցերը։ Հայ գրերի գիւտի 1500 եւ հայ տպագրութեան 400 ամենակների առքի պարտիզակցիները երատարակեցին «Մեղու» շարաբ-աբերբի մատենաշար, որի առաջին համարում լոյս տեսաւ Մելքոն Յովսէփեանի «Համազգային տօմը եւ պարտիզակցին» յօդուածաշարը։ Առաջին համարից յետոյ պարբերաց երատարակուեցին «Մեղու»ի յաջորդ բուերի մատենաշարները (տե՛ս ՅՈՎԱԿԻՓԵԱՆ, Մ., Համազգային տօմը եւ պարտիզակցին, Մատենաշար «Մեղու», թիւ է, Ատարազար, 1913, էջ 16):

ցին 1883ին՝ Պարտիզակի փայտաշէն առաջնորդարանում։ Դա երկսեռ նախակրթարան էր, որտեղ սովորում էին 120ից աւել տղաներ ու աղջկներ, որոնք իրենց կրթութիւնն ու դաստիարակութիւնը ստանում էին Անարատ յղութեան քոյրերի հսկողութեան ներքոյ։

1889-1891ին կրթական գործը ընդլայնելու եւ բարելաւ հիմքերի վրայ դնելու նպատակով նրանք գնեցին ընդարձակ հողատարածք եւ այնտեղ կառուցեցին երկսեռ բարեկարգ վարժարաններ։

Մխիթարեանները կրթական գործունէութիւն ծաւալեցին նաեւ Նիկոմիդիայում՝ որտեղ առաջին դպրոցը սկսեց գործել 1887ին՝ Հայր Վըթանէս Պալեանի նախաճեռնութեամբ։ Այս դըպրոցը, որպէսզի դառնար մինչեւ այդ իզմիթում գործող դպրոցների համար արժանի մրցակից, ի սկզբանէ պիտի լինէր բարեկարգ, ունենար կրթութեան բարձր մակարդակ եւ, որ ամենակարեւորն էր, պիտի ապահովուած լինէր բարձր որակաւորում ունեցող ուսուցիչներով։ Այդ ուղղութեամբ նրանք կատարեցին հսկայածաւալ աշխատանք՝ շինայելով ո՛չ նիւթական եւ ո՛չ էլ բարոյական ու ֆիզիկական միջոցներ։ Իզմիթի դպրոցն իր փայլուն շրջանն ապրեց յատկապէս Հայր Աւետիք Գաղեգեանի օրօք, երբ «Յիւթապէս ընդարձակուելուն եւ միջոցներու անկուն համեմատ՝ անել եր նոյնպէս աշակերտներու քիւը ինչպէս նաեւ ուսումներն եւ ուսուցիչները»<sup>6</sup>։

1891ից ի վեր Պարտիզակի երկսեռ դպրոցներում սովորող աշակերտների թիւը մշտապէս պահպանուել է 30-35ի սահմաններում։ Այսինքն՝ երկու դպրոցները միասին, ունեցել են 170-175 աշակերտ։ Դպրոցում աշխատել է ընդամէնը 5-6 ուսուցիչ, որոնցից երեքը արտաքին էին եւ վճարովի, իսկ միւսները ներքին քահանաներն էին։ Այս դպրոցներում ուսման բովանդակութիւնը շատ քիչ տարբերութեամբ համընկնում էր Քաղկեդոնի դպրոցի առաջին չորս տարուայ կրթական ծրագրերին։

## ՏՐԱՊԻԶՈՒՆ

Մխիթարեանների կրթական գործունէութիւնը Տրապիզոնում ունեցել է զարգացման երեք շրջան։ Առաջին շրջանի գործունէութիւնը կապուած էր Հայր Մինաս Բժշկեանի անուան

6 ՍԱՐԳԻՍԵԱՆ, Հ. ԲԱՐՍԵՂ, Երկիարիւրամնայ կրթական գործումէութիւն, հտ. Ա. 1746-1901, Ս. Ղազար, Վենետիկ, 1936, էջ 77։

Հետ, որը եռանդում գպրոցաշխնական գործունէութիւն էր ծաւալել նաեւ կ. Պոլսում:

1817ին Տրապիզոնում, ժողովրդի նուիրատուած հողատարածքում, Հ. Մինաս Բժշկեանը իր միջոցներով կառուցեց առաջին Միհթարեան նախակրթարանը, որի մասին նա նամակով տեղեկացրեց Աբրահամը: Այդ նամակից պարզուամ է նախ, որ Տրապիզոնում մինչ այդ կաթոլիկ հայերը դպրոցներ չեն ունեցել, եւ նրանց երեխանները գրեթէ զրկուած են եղել կրթութիւն ստանալու հնարաւորութիւնից. Երկրորդ, որ Հայր Մինասն իր միջոցներով է կառուցել դպրոցը եւ դարձել այդ դպրոցի առաջին հիմնադիրն ու ուսուցչապետը, եւ վերջապէս երրորդ, որ նա նպատակ ունէր յետագայում աւելի ընդլայնել կրթական գործն այդ դպրոցում եւ արեւմտահայ գաւառներից Տրապիզոն գաղթած հայ մանուկների համար այն դարձնել ապաստարան եւ կենտրոնական վարժարան: Հայր Մինասի դպրոցը դրուած էր բարելաւ հիմքերի վրայ եւ տալիս էր առատ հունճք. Կը շարունակէր այդպէս, եթէ չինէր նախանձն ու չարութիւնը: 1819ին Հայր Մինասի վարժարանը մեծ հոչակ էր ձեռք բերել ոչ միայն քաղաքում, այլ նաեւ նրա սահմաններից դուրս: Նրա տեսչութեան ներքոյ սովորող աշակերտների թիւը օր օրի բազմապատկւում էր: Մինչդեռ վարժարանը գոյատեւեց երկու եւ կէս տարի եւ այդ ընթացքում «հազիւ թէ ազգային մանկութիւն ուսման նախադրութեն ելած կը թեւակոխէր բարձրագոյն կրթութեան ասպարեզին մէջ՝ ոմանց նախանձն եւ լարած ծածուկ որոգայթները կը ստիպէին գործասէր վարդապետը սրտակուոր բողուլ ամէն բան եւ հեռանալ»: Իր գործին սիրով փարուած, անխոնջ մշակի դէմ որոշ մութ ուժերի կողմից ծաւալուած ամբաստանութիւնները, զրպարտութիւններն ու ահաբեկչութիւնները հարկադրեցին նրան թողնել իր սիրած գործը եւ հեռանալ, որով էլ աւարտուեց Տրապիզոնի մէջ Միհթարեանների կրթական գործունէութեան առաջին շրջանը:

Երեք տասնամեակ էր պէտք, որպէսզի Միհթարեանները վերսկաէին Հայր Մինասի կիսատ թողած գործը: Եւ այսպէս՝ 1846ին Հայր Պետրոս Մինասեանը, որ նոյնպէս տոգորուած էր կրթական գաղափարներով եւ նուիրուած դպրոցական գործին, Տրապիզոնում վարձեց մի տուն, հաւաքեց 30-40 երեխայ եւ սկըսեց Միհթարեանների գործունէութեան երկրորդ շրջանը:

Դպրոցաշինութեան ճանապարհին նա զգալի դժուարութիւններ ունեցաւ: Առաջին լուրջ փորձութիւնը նիւթական անապահովութիւնն էր, քանի որ ժողովուրդը չէր օգնում, ինքը նիւթական միջոցներ չունէր, ուրեմն՝ վերջին յոյսը վենետիկից ստացուղ տարեկան չնչին հասոյթներն էին, որ Հազիւ բաւականացնում էր ցերեկօթիկ դպրոց բացելու համար, մինչդեռ նա ուրիշ ծրագրեր ունէր: Հայր Պետրոսը քաջ գիտակցում էր, որ գիշերօթիկ դպրոցի պահանջը դարձել է օրախնդիր տեղի ուսումնատենչ երիտասարդութեան համար, հետեւաբար՝ աշխատում էր օր առաջ իրականացնել իր նախորդի՝ Հայր Մինաս Բժշկեանի ծրագրերը: Այդ նպատակով 1847ին եկեղեցու շրջակայքում նա գնեց հողատարածք եւ ձեռնամուխ եղաւ նոր դպրոցի կառուցման աշխատանքներին: Իր ծրագրերն իրագործելու համար նա կնքեց 25000 դահեկանի փոխառութիւն՝ կարծելով, որ այդ գումարը կը բաւականացնի շինարարական ծախսերը հոգալու համար, սակայն նա սխալուեց իր նախահաշիւների մէջ: Նորակառոյց դպրոցը նըրա վրայ նատեց 40.000 ֆրանկ: Դպրոցն իր աշխատանքները սկսուեց 100 երեխայով: Գնալով սովորողների թիւն աճեց եւ Հայր Պետրոսի քրիտնաջան ջանքերի չնորհիւ դպրոցը դարձաւ լուրջ մրցակից քաղաքի միւս վարժարանների համար: Դպրոցը խոստանում էր մեծ ապագայ, սակայն մարդկային չարութեան մեքենան նորից գործեց: 1848ին Հայր Պետրոսը ետ կանչուեց կ. Պոլիս եւ նրան արգելուեց վերադառնալ Տրապիզոն: Անհիմն պատըրուակներով եւ զանազան մեքենայութիւններով 16 տարի շարունակ Տրապիզոնում խոչընդուռուեց Մխիթարեանների կրթական գործունէութիւնը, իսկ արդիւնքում հայր Պետրոսի հիմնած բարեկերտ դպրոցը, որ կեանքի գնով կառուցուեց, անխնամ եւ դատարկ մնալով աւելուեց ու թալանուեց տեղաբնակների կողմից: Այնուամենայնիւ, տեղացիները որոշեցին դպրոցի կիսաքանդակերի վրայ կառուցել վարժարան աղջիկների համար, սակայն այդ ծրագիրը նոյնպէս խափանուեց, քանի որ մեծահարուստ Ստեփան Կիւրեղեանն իր համախոհների հետ խոստացաւ կառուցել իգական վարժարան այն պայմանով, որ տեղի եպիսկոպոսը թույլատրի Մխիթարեաններին վերաշինել դպրոցը, եւ նրանց տրուի հնարաւորութիւն շարունակել իրենց կրթական գործունէութիւնը: Կիւրեղեանի առաջարկութիւնը սիրով ընդունուեց ժողովրդի կողմից, մինչդեռ թեմական եպիսկոպոսարանի կողմից այն մատնուեց լուռթեան: 1870 թուականին երկու աղերսագիր յղուեց վենետիկ, մէկը տրապիզոնցիների, իսկ միւսը

սամսոնցիների կողմից, որոնք «յուսահատ կոչով դարձեալ Մխիթարեան բահանայ եւ դպրոց կը թախանձէին», սակայն պատասխանը դարձեալ նոյն էր: Այսինքն, եթէ թեմական եպիսկոպոսարանի կողմից լինէր թոյլատութիւն, ապա Վենետիկը պատրաստ էր նրանց օգնութեան ձեռք մեկնելու: Այսպիսի անհիմն պատճառաբանութիւնների եւ անհանդուրժողականութեան պայմաններում աւարտուեց Մխիթարեանների կրթական գործունէութեան նաեւ երկրորդ շրջանը Տրապիզոնում:

Մխիթարեանների գործունէութեան երրորդ շրջանը Տրապիզոնում սկսուեց 1886ին Հայր Մինաս Նուրիխաննեանի նախաձեռնութեամբ: Հայր Մինասն իր աշխատասիրութեամբ եւ քահանայական պարտականութիւնների անթերի կատարմամբ արժանացել էր ոչ միայն եկեղեցականների համակրանքին, այլ նաեւ տեղացիների յարգանքին: Պէտք է մատնանշել, որ այդ շրջանում Մխիթարեանների կրթական գործունէութեան համար Տրապիզոնում ստեղծուել էին բարենպաստ պայմաններ: Փոխուել էին ժամանակներն ու հանգամանքները, մեղմացել էին տեղացիների կողմից նախկին հակասութիւնները, մինչեւ անգամ եպիսկոպոսը՝ Պօղոս Մարմարեանը, իբրեւ բարեմիտ եւ կրթասէր քահանայ, հովանաւորում եւ խրախուսում էր Մխիթարեանների կրթական շարժումը: Կտրուկ փոխուել էր նաեւ ժողովրդի վերաբերմունքը Մխիթարեանների դպրոցների հանդէպ, նրանք գիտակցում եւ կարեւորում էին բարեկարգ դպրոցների դերն իրենց երեխանների կրթութեան գործում՝ անտեսելով դաւանաբանական խնդիրները: Եւ այսպէս՝ Աբբահօր հրահանգով Հայր Մինասը Տրապիզոնում բացեց չորս դասարանից կազմուած բարձրագոյն նախակրթարան<sup>8</sup>, որն առաջին ուսումնական տարում ունէր ընդամէնը 100 աշակերտ: Դպրոցն իր յարմարաւէտութեամբ եւ կրթական բարձր մակարդակով շուտով մեծ հոչակ ստացաւ եւ դարձաւ հզօր մրցակից տեղի ազգային եւ լատինական մայր դպրոցների համար: Մինչեւ անգամ շատ ծնողներ երեխաններին հանեցին իրենց դպրոցներից եւ տեղափոխեցին Մխիթարեանների բարձրագոյն նախակրթարան, որի շնորհիւ այստեղ աշակերտների թիւը մըշտապէս 100ից բարձր էր: Այս ակնյայտ յաջողութիւնները նորից

8 Նորակառոյց դպրոցը գտնուում էր բաղադրի կենտրոնում՝ նաւամատոյցից քիչ հետու, ուներ հրաշալի դիրք, գիշերօրիկների համար բարեկարգ եւ ընդարձակ նաշարան, վայելուչ եւ յարմարաւէտ ննջարան, սերտարան, բաղադրմերձ թոց գիւղում հրաշալի ամառանոց:

նախանձի եւ հակամարտութիւնների տեղիք էին տալիս, սակայն Հայր Մինասը իր ճկուն, ճարտար եւ առինքնող վարուեցողութեամբ կարողացաւ յաղթահարել այդ ամէնը եւ կայուն բարեկամական փոխարաբերութիւններ պահպանել Մխիթարեանների եւ միւս դպրոցների միջեւ:

1894ին Աբբահօր հրահանգով Հայր Մինասը ետ կանչուեց Վենետիկ, իսկ նրա փոխարէն Տրապիզոն գործուղուեց Հայր Յակոբ Տիրոյեանը: Նրա տեսչութեան շրջանում Մխիթարեան դպրոցն ապրեց իր բարգաւաճման փայլուն շրջանը: Քանի որ սովորողների թիւն արդէն անցնում էր 100ից, ուստի դպրոցում բացուեց եւս երկու լրացուցիչ դասարան: Այդ շրջանում բարձրագոյն նախակրթարանն ունէր 30 գիշերօթիկ, տարբեր գաւառներից 15 ձրիավարժ եւ 60 կիսաթոշակաւոր-աշակերտներ: Դըպրոցն ունէր մշտական եւ հաստատուն եկամուտ, որը կազմում էր տարեկան 12-14 հազար ֆրանկ: Ուսուցչական մարմինը կազմուած էր 10 հոգուց, որոնցից վեցը արտաքին էր եւ վճարովի, իսկ չորսը՝ ներքին քահանաներ: Դպրոցի գլխաւոր եւ հիմնական խնդիրներից մէկը՝ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի համար ուսանողներ հասցնելն էր: Այստեղ ուսման տեսողութիւնը վեց տարի էր. նախակրթարանային՝ երկու տարի, կրթարան (գիմնազիա)՝ չորս տարի: Կրթական ծրագրերը կազմում էին ըստ դասարանների՝ հաշուի առնելով սովորողների զարգացման մակարդակը:

### ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ – Կ. ՊՈԼԻՍ

Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնը<sup>9</sup> իր գոյութեան առաջին տարիներից ոչինչ չխնայեց Թուրքիայի հայաշատ գաղութներում դպրոցներ հիմնելու համար՝ նպատակ ունենալով կրթել ու դաստիարակել հայ մանուկներին: Այդ նպատակն իրականացնելու համար նրանք մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը դպրոցներ բացեցին կոստանդնուպոլսում, Տրիեստում, Իզմիրում, Այդնում, Կարինում, իսկ պատերազմից յետոյ նրանք շարունակեցին դպրոցաշխնութիւնը Պլովդիւմ, Կոկինայում, Կահիրէում, Բեյրութում եւ այլուր:

9 Մխիթար Սեբաստոցու մահից որոշ ժամանակ անց՝ 1773ին, միաբանութիւնից անջատուեց մի քեւ եւ հաստատուեց Վիեննայում: 2000ին Վիեննակի եւ Վիեննայի միաբանութիւնները վերստին միաւորուեցին:

1857ին կ. Պոլսի Բանկալթիի թաղամասում Մխիթարեանները հիմնեցին դպրոց, որի նպատակն էր հայ կաթոլիկ մանուկներին տալ կրօնական, բարոյական եւ մտաւոր կրթութիւն։ Վարժարանի տեսչութիւնը գտնուում էր Վիեննայի Մխիթարեանների ձեռքում, իսկ ուսուցչական մարմինը կազմուած էր միաբաններից եւ արտաքին ուսուցիչներից, որոնք միասին 21 հոգի էին։ Վարժարանը գործում էր գերմանական ուելական դպրոցի կրթական ծրագրերով։ Այդ մասին «Քիւզանդիրոն»ը իր համարներից մէկում ծանուցում է՝ «Ուսամն ծրագիրն է արդի երկրորդական դպրոցների յասուկ առաջագիրը, որ կը համապատասխանէ գերմանական ուելական դպրոցի առաջագրին, բայց հնարաւորին չափով այս կանոնադրութիւնը յարմարեցուած էր տեղական պայմաններուն։ Վարժարանն աւարտողները շատ հեշտութեամբ կարող են ուսումը շարունակել եւրոպական ցանկացած բարձրագոյն դպրոցում առանց բննութիւն յանձնելու, կամ ձեռնամուխ լինել վաճառականութեան մէջ»<sup>10</sup>։ Վարժարանն իր ուսման ընդգրկուն բովանդակութեամբ, լեզուների եւ բնագիտամաթեմատիկական առարկաների լաւ դրուածքով, շէնքային բարեկարգ յարմարութիւններով եւ ուսուցչական որակեալ կազմով, իսկապէս դարձել էր հզօր մրցակից ոչ միայն կ. Պոլսի ազգային դպրոցների, այլեւ Կարնոյ Սանսարեան վարժարանի համար։ Իր երկարամեայ գործունէկութեան ընթացքում ժամանակի պահանջներին համապատասխան վարժարանի կանոնադրութիւնը եւ կրթական ծրագրերը մշտապէս ենթարկուել են փոփոխութիւնների։

1899 ուսումնական տարուայ տեղեկագիրն այդ մասին ծանուցում է. «Վարժարանս այս տարեշրջանին մէջ աւելի օգտակար ըլլալ կարծեց՝ իւր ծրագրին մէջ նոր փոփոխութիւններ մուծանելով, եւ յարմարեցնելով զայն միջավայրին պիտոյիցը։ Աւելորդութիւններէն շատերը կամ բռլորովին կրնաւեց եւ կամ իրենց տարերացը վերածեց՝ միայն անհրաժեշտ կարեւոր ծանօթութիւնները տալով։ Համոզուած ենք թէ արեւելքի ուեւ դպրոց կամ վարժարան մը, որ պարզապէս կ'ընդօրինակէ եւրոպական բարձրագոյն հիմնարկութեան մը ծրագիրը նպատակագուրկ գործ մը կ'ընէ, եթէ կայ իւր նպատակին մէջ՝ երկրին ու միջավայրին օգտակար անդամներ հասցնելու փոյթը»<sup>11</sup>,

10 «Քիւզանդիրոն», թիւ 1782, 5 Օգոստոս, կ. Պոլիս, 1902:

11 «Տարեկան տեղեկագիր Վիեննական Մխիթարեանց վարժարանին», կ. Պոլիս, 1898, էջ 1:

Դժուար չէ կռահել, որ տեղեկագիրը պահանջում էր, որ վարժարանի կրթական ծրագրերը բարեփոխուեն այնպէս, որ նրա բոլոր կէտերը նախ եւ առաջ ծառայեն վարժարանի հիմնական նպատակի իրականացմանը, եւ, եթէ առանձին գիտութիւնների մէջ յաջողութիւն ունեցող հատ ու կենտ սովորողներ նպատակ ունեն իրենց կրթութիւնը շարունակել եւրոպական որեւէ բարձրագոյն կրթուջախում, ապա դա չի նշանակում, որ կրթական ծըրագրերը պէտք է յարմարեցուեն այդ մասնաւոր նպատակի իրականացմանը, որը կը յանդեցնէր նրան, որ հաւասարաշափ մակարդակով բոլորը ստանային բանասիրական եւ համեմատական լեզուագիտական կրթութիւն միայն այն բանի համար, որ դրանց մէջ թերեւս գտնուեն մի քանիսը, որոնք յետագայում կը նուիրուեն լեզուագիտութեան այդ նորագոյն ճիւղի ուսումնասիրութեան գործին:

Ելնելով այդ շրջանի կրթական պահանջներից՝ Բանկալթիի վարժարանի ծրագրերը նոյնպէս բեռնաթափուեցին: Այդ մասին իմանում ենք վարժարանի տեղեկագրի հետեւեալ ծանուցումից. «Յայտ է քէ դպրոցական այսպիսի ծրագիր մը “ի եռոր արկանելի է”: Մեր միջավայրի բարձրագոյն դպրոցներէն կը պահանջուի Հumaniora անուանեալ ամէն գիտութիւններն, եւ ասոնց մէջ յաջողելու համար՝ մէկ կամ երկու կարեւոր լեզուներ»<sup>12</sup>: Սա միանգամայն ընդունելի պահանջ էր, սակայն այս դէքըում պէտք է խուսափել այն բանից, որ միջոցը չդառնայ նպատակ, այսինքն՝ լեզուների ուսուցման խնդիրը առաջին հերթին պէտք է ծառայեցնել կրթական նպատակներին: Բնականաբար, 5-6 տարիների ընթացքում, որքան էլ բարելաւ հիմքերի վրայ լինէր օտար լեզուների դասաւանդման դրուածքը, միեւնոյն է երեխան չէր կարող իր մայրենի լեզուի գանձերի կողքին կատարելապէս տիրապետել մէկից աւել օտար լեզուների, մինչեւ արմատական փոփոխութիւններ չկատարուէին օտար լեզուների ուսուցման մեթոդիկայի մէջ: Այս հարցի վերաբերեալ եւրոպական առաջադէմ երկրներում սուր վիճաբանութիւններ էին գնում, որոնք պտտւում էին հետեւեալ հարցադրումների շուրջ.

1. Օտար լեզուով գրելու եւ խօսելու արդի ուսուցումը համապատասխանում է արդեօք դպրոցի պահանջներին թէ ոչ:

12 Անդ, էջ 4:

**2. Օտար լեզուների ուսուցման համար «արտադրական» եղանակն է նախընտրելի, թէ «վերընդունական»՝<sup>13</sup> ը:**

Մատնանշենք, որ ինչպէս բոլոր դպրոցներում, այնպէս էլ Բանկալթիի Միջիթարեան վարժարանում օտար լեզուների ուսուցման այս երկու եղանակն էլ կիրառուում էր, որի մասին ծանուցում է նաեւ վարժարանի տեղեկագիրը. «Մեր միջավայրին պիտոյքը կը յարդորէ զմեզ որ չսպասենք այս եետաքրքրական վիճարանութեանց ելքին, այլ իրեւ գործնական մարդիկ շարունակենք վերջին երկու եղանակներն ալ գործադրել օտար լեզուի ուսուցման մէջ։ Արդ քանի որ օտար լեզու մը՝ աւելի հանգիտապատի (հաւասարագօր՝ Շ. Ո.) կը հանդիսանայ տեղական լեզուին, եւ հայոց համար՝ մեր մայրենի լեզուին, բնական է քէ ընտրելու ենք այն կերպն, որ աւելի ապահով եւ դիւրաւ կը տանի զմեզ մեր նպատակին»<sup>14</sup>. Վարժարանի տնօրինութիւնը չէր բաւարարուում եղածով եւ մշտապէս պրապտում, հետազօտում, որոնում եւ վարժարան էր ներմուծում այս ուղղութեամբ կատարուած իւրաքանչիւր նորութիւն, ի հարկէ, հաշուի առնելով տեղային պայմանները եւ դպրոցի առանձնայատկութիւնները։ Այս մասին արձանագրում է նաեւ «Քիւզանդիիոն»ը՝ «Գաղղիկերէն լեզուն գործնականապէս սորվելու համար աշակերտները պարտաւորուած են միշտ նոյն լեզուով խօսիլ եւ մշտապէս պէտք է գունաւէին երեք ֆրանսիացի մարիսդներ, որոնք վարչութիւնը քերել տուեց Փարիզից։ Նոյնը գերմաններէնի համար, բացի գերմաններէնի կին ուսուցիչներից վարչութիւնը թեուլինից մի մասնագէտ նոյնապէս պէտք է քերի»<sup>15</sup>։

1898–1899 ուսումնական տարում վարժարանը օտար լեզուների ուսուցման նոր եղանակ էր փոխառել եւրոպական առաջաւոր դպրոցներից։ Այդ նոր մեթոդիկան 1880ին մշակել էր Փրանսիացի նշանաւոր լեզուաբան Ֆրանսուա Գուէնը։ Այդ մեթոդը ունեցել էր արդէն իր չորսամեայ փորձաշրջանը Զմիւռնիայի Միջիթարեան վարժարանում եւ տուել էր լաւ արդիւնք, այդ պատճառով էլ այն մտցուեց նաեւ Բանկալթիի վարժարան։ Այդ մեթոդի ուսուցողական առաւելութիւնն այն էր, որ Փրանսերէն ու գերմաններէն չիմացող 10 տարեկան երեխան ուսումնա-

13 «Արտադրական» եղանակի դէպքում սովորողը կարող էր ազատ խօսել, գրել ու քարգմանել, իսկ «վերընդունական»ի դէպքում, սովորողը կարող էր միայն կարդալ, լսել ու փոխադրել։

14 Անդ, էջ 5։

15 «Թիւզամդիոն», թիւ 1789, 5 Օգոստոս, Կ. Պոլիս, 1902։

ոռութեան՝ մէկ տարուայ ընթացքում ամէնօրեայ խօսակցութեան մէջ արդէն տիրապետում էր 250-300 բառ, որոնցով կազմում էր նախադասութիւններ, կարողանում էր այդ նախադասութիւնները վերլուծել եւ վերջապէս կարողանում էր իր սովորած բառերն անսխալ գրել: «Ապագան այս մերուին է,- արձանագրում է տեղեկագիրը,- գոնէ մինչեւ որ յարմարագոյն մը գըտնուի: Քերականական չոր ու ցամաք կանոններու կեանք տուած է Գուէն, եւ այս կեանքով է որ պիտի անի մանկան միտքը: Մեր յարգոյ պաշտօնակիցներու մտադրութիւնը կը երբաւիրենք վերոյիշեալ մերուին վերայ, ցանկալով որ արդի ուսանող մանկութիւնը՝ դիւրութեամբ տիրէ օտար լեզուներու, որոնք մեր միջավայրին ծրագիրներուն մէջ գրաւած են այնչափ տեղ, որչափ աշխարհացոյց տախուակի մը վրայ՝ օր, աղ, ջուրը տեղ գրաւած է ցամաքի համեմատութեամբ»<sup>16</sup>:

Բանկալթիի Վիեննական Միհիթարեան վարժարանը գիշերօթիկ վարժարան էր, որը 1898-1899 ուսումնական տարում տուել էր 75 շրջանաւարտ: Երկու նախապատրաստական դասարաններից (ծաղկոց, կրթական) բացի, վարժարանն ունէր նաև Զ., Ե., Դ. եւ Գ. դասարաններ: Գալիք ուսումնական տարում նախատեսում էր բացել նաև Բ. դասարան: Վարժարանի ուսուցչական մարմինը կազմուած էր 11 վարդապետներից եւ 10 արտաքին ուսուցչներից: Վարժարանում դասաւանդւում էին հետեւեալ առարկաները: Կրօնագիտութիւն, ուսողական գիտութիւններ (թուաբանութիւն, գրահաշիւ, երկրաչափութիւն, հաշուակալութիւն), աշխարհագրութիւն, պատմութիւն, բնական պատմութիւն, գիտական ուսումն, լեզուներ (հայերէն, գերմաներէն, գաղղիերէն, տաճկերէն), գեղագրութիւն, գծագրութիւն, երաժշտութիւն:

Իրենց մանագիտական եւ մանկավարժական պատրաստուածութեամբ ուսուցչական կազմում աչքի էին ընկնում Միհիթեւեանը, Գրոսը, Տալեանը, Պոյաճեանը, Գարանֆիլեանը, Կուրտիկեանը եւ այլք:

Վարժարանում տարեկան երկու անգամ անց էին կացւում բանաւոր եւ գրաւոր քննութիւններ: Սովորողների գիտելիքների գնահատումը կատարւում էր հետեւեալ ձեւով՝ 6- ամենաքաջ, 5-քաջ, 4- լաւ, 3- միջակ, 2- տկար, 1- վատ, 0- ոչինչ:

16 «Տարեկան տեղեկագիր Վիեննական Միհիթարեամց վարժարանին», Կ. Պոլիս, 1899, էջ 5-6:

**Վարժարանում դասերն աւարտւում էին Յունիսի վերջերին, իսկ դպրոցամուտի քննութիւններն սկսում էին Սեպտեմբերի 1-12ը, 13ից սկսում էին կանոնաւոր դասերը:**

**Միաբանութեան նորընտիր վարչութիւնը դպրոցի ուսումնակրթական աշխատանքներին նոր թափ հաղորդելու եւ այդ շրջանի դպրոցներին ներկայացուող պահանջներին իր վարժարանի ընթացքը համապատասխանեցնելու նպատակով 1909ին Հ. Գ. Մենեվիշեանի տնօրինութեան օրոք, բարեփոխեց կրթական ծրագրերը՝ իր առջեւ ունենալով երեք հիմնական խնդիր.**

**1. լեզուների, մասնաւորապէս, հայերէն ու տաճկերէն լեզուների խորացուած ուսուցում,**

**2. բնագիտամաթեմատիկական գիտութիւնների խորացուած ուսուցում,**

**3. վարժարանի ներքին եւ արտաքին բարեփոխումներ:**

**Վարժարանը գործում էր եւրոպական վարժարանների կըրթական ծրագրերով, որի բովանդակութեան մէջ մտնում էին հետեւեալ առարկաներ.**

**1. Բնական գիտութիւններ՝ բնական գիտելիք (համառօտ մարդախօսութեամբ), կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, հանքաբանութիւն, երկրաբանութիւն, տիեզերագիտութիւն եւ տարերք աստղաբաշխութեան:**

**2. Առեւտրական գիտութիւններ՝ առեւտրական աշխարհագրութիւն, հաշուակալութիւն, թղթակցութիւն (տաճկերէն, գաղղիերէն եւ գերմաներէն), արուեստախօսութիւն (տեխնոլոգիա):**

**3. Պատմական գիտութիւններ՝ Ա տոհմային եւ ընդհանուր պատմութիւն (հին, միջին եւ նոր դար), Բ պատմութիւն, տոհմային դրութիւն եւ օտար ազգերի մատենագրութիւն:**

**Ծրագրում Ա, Բ, Գ կէտերով սահմանում էր լեզուների, գիտութիւնների եւ արուեստների ուսուցման հետեւեալ կարգայնութիւնը.**

**Ա. Լեզուներ. Հայերէն, տաճկերէն, գաղղիերէն, գերմաներէն եւ անգլերէն: Անգլերէնը պարտադիր էր միայն երկու բարձրագոյն դասարանների համար: Լեզուների ուսուցումը հեշտացնելու համար, մեծ բաժին էր յատկացւում թարգմանութիւններին, մասնաւորապէս տաճկերէն, գերմաներէն եւ հայերէնի գըրաբարի թարգմանութիւններին:**

**Բ. Գիտութիւններ.** մաթեմատիկա, պարզից մինչեւ բարձրագոյն թուաբանութիւն (մինչեւ նկարագրականը եւ եռանկիւնաչափութիւն):

**Գ. Գեղարուեստներ.** ուրուագրութիւն (բարձրագոյն, գծագրական ուրուագրութեամբ), երաժշտութիւն՝ դաշնամուր եւ քընար (ոչ պարտադիր):

Բոլոր առարկաները, բացի հայերէնից ու տաճկերէնից, դասաւանդուում էին ֆրանսերէն ու գերմաներէն լեզուներով:

Վարժարանի տնօրինութիւնը ամէն ամիս ծնողներին ուղարկում էր համեմատական ամսացուցակ, որտեղ նշում էր սովորողների ինչպէս ուսման մէջ ունեցած՝ առաջադիմութեան, այնպէս էլ վարքագծի եւ բարոյական դաստիարակութեան մէջ նըրանց դրսեւորած դրական ու բացասական երեւոյթների մասին:

Լուսաբանելով Մխիթարեանների դպրոցական ու կրթական գործունէութիւնը՝ նպատակ ենք ունեցել բացայացել մի քանի կարեւոր մանրամասներ, որոնք բնութագրական են եղել միաբանութեան ուսմատի բոլոր հայրերի համար:

Միաբանութիւնը սուրբ նպատակ է ունեցել իր վարդապետութեան հետ մէկտեղ անսպառ լոյս, յոյս եւ գիտութիւն տարածել հայութեան շրջանում, իսկ դա եղել է նրանց հաւատամքը եւ գործունէութեան հիմնական ուղղուածութիւնը: Իբրեւ իրենց գործին հաւատաւոր նուրիեալներ՝ նրանք հարկադրուած մոռացել են սեփական անձը, վտանգել են իրենց կեանքը, մշտապէս ենթարկուել են ամբաստանութիւնների, մատնութիւնների, զգոպարտութիւնների, կրել են մեղադրանքների, կասկածամտութեան եւ վրէժինդրութեան, չարութեան եւ ատելութեան նուաստացուցիչ ծանրութիւնը, սակայն, այս ամէնով հանդերձ, ձգտել են հաւատարիմ մնալ իրենց լուսաւորական գաղափարներին եւ երբեք չդաւաճանել Մխիթար Եթեաստացու պատգամներին:

Զպէտք է մոռանալ, որ Մխիթարեանների լուսաւորական գործունէութեան նպատակաբանութիւնը նախ եւ առաջ ծառայել է պետութիւնը եւ ազգային անկախութիւնը կորցրած, օտար կայսերապետութեան լծի տակ ապրող եւ աշխարհասիրիւ հայութիւնը դպրոցների միջոցով լուսաւորելու եւ այդ ճանապարհով ազգային արժանապատութիւնը եւ ինքնութիւնը պահպանելու ազգային գաղափարին: Իսկ այդ նպատակն իրագործելու համար նրազդու գաղափարին: Իսկ այդ նպատակն իրագործելու համար նրանք օգտագործել են իրենց թէ՛ նիւթական, թէ՛ Փիզիկական,

թէ՝ բարոյական եւ թէ՝ կրօնական բոլոր հնարաւորութիւնները, եղած ներուժն ու արտօնութիւնները:

Խորհրդահայ պատմագրութիւնն ու մանկավարժութիւնը, շրջանցելով մի շարք կարեւոր հանգամանքներ, Մխիթարեանների վիթխարի եւ բազմաբովանդակ գործունէութիւնը դիտարկել են զուտ դաւանաբանական տեսանկիւնով՝ մատնացոյց անելով միայն նրանց ծառայութիւնները կաթոլիկութեան միջնաբերդին՝ Վատիկանին: Մինչդեռ նրանց 300ամեայ արգասաբեր գործունէութիւնը, լուսաւորութեան տարածման, դպրոցաշինութեան եւ կրթական գործում նրանց կատարած անօրինակ սիրագործութիւններն այդ բնագաւառներում, կարիք ունեն յաւելեալ ուսումնասիրութիւնների, նոր մեկնաբանութիւնների, նոր գնահատանքների ու արժեւորումների:

Առաջին հերթին նրանք հօր կամուրջ հանդիսացան հայեւրոպական մշակոյթների երկխօսութիւնների եւ փոխազգեցութիւնների համար: Մխիթարեանների սերտ առնչութիւններն ու աղերսները եւրոպական միջավայրի ու մշակոյթի հետ նրանց փոխանցեցին մեթոդական ու կանոնակարգուած գործունէութեան այն եղանակները, որոնց չնորհիւ նրանք ստեղծեցին իրենց հայագիտական ու պատմագիտական աշխատութիւնները, հանրագիտարանային բնոյթի բառարանները, հնախօսական ու աշխարհագրական ուսումնասիրութիւնները, ճաշակով ճեւաւորուած տպագրութիւնները եւ այլ գործեր: Դրանք հայ ժողովրդին ներկայացրեցին ոչ միայն եւրոպական քաղաքակրթութեանը, այլեւ հայ հնագարեան մշակոյթն իր ամբողջական ճոխութեամբ եւ ինքնատիպութեամբ տարածեցին նաեւ ողջ Արեւմուտքում:

Մխիթարեանները, ուղղակի եւ անմիջական ազդեցութիւն կրելով համամարդկային քաղաքակրթութիւնից, ազգային գիտութեան բոլոր ճիւղերը համակարգեցին եւ դրանց ուսումնասիրութեան սահմանների միջեւ կարգ ու կանոն հաստատեցին: Մեքաստացին, Զամշեանը, Սոմալեանը, Ալիշանը, Բագրատունին եւ հայագիտութեան ու պատմագիտութեան միւս հսկաները կազմեցին առաջին կանոնաւոր քերականութեան, պատմութեան, աշխարհագրութեան, մատենագրութեան եւ միւս գիտութիւնների վերաբերեալ գրքերը, հիմնեցին եւրոպականի նման լաւագոյն դպրոցներն ու տպարանները:

Նրանց երեքրարեայ գործունէութիւնը ընթացել է երկու հիմնական ուղղութեամբ. առաջին՝ վերագտնել եւ ոգեկոչել հայ

ժողովրդի անցեալի հոգեւոր ու մտաւոր արժէքները, երկրորդ՝ ազգային մշակոյթը մշտապէս հաղորդակից դարձնել եւրոպական քաղաքակրթութեան հետ։ Գործունէութեան այդ երկու բնագաւառոներում Մխիթարեանները կատարել են անգնահատելի ծառայութիւններ, քանի որ ժողովուրդների մշակութային փոխառութիւնների եւ փոխազդեցութիւնների տարածումը հանդիսանում է իրրեւ համամարդկային քաղաքակրթութեան զարգացման անհրաժեշտ պայման եւ հեռանկարային ուղի։

“

ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆԵԱՆ

## Summary

# A SHORT SURVIEW OF THE EDUCATIONAL AND ENLIGHTENING ACTIVITIES OF THE MEKHITARIAN ORDER UNDER THE OTTOMAN EMPIRE

SHOGHIK VOSKANYAN

Elucidating the educational activities of the Mekhitarists we have the intention to reveal some details which were characteristic for all the fathers of the Congregation.

The holy mission of the Congregation fathers, alongside with their doctrine, was to spread light, hope and science among Armenians, and that was their credo and the main direction of their activities. As faithful devotees of their duty, they had to forget their person, to risk their life, constantly undergo persecutions, betrayals, calumnies, they were accused and doubted, they had to face vengeance, malice and hatred, but nevertheless, they always tried to remain faithful to their ideas of enlightenment and never did they betray the orders of Mekhitar Sebastatsi.

One mustn't forget that the main goal of the Mekhitarists' enlightening activities was first of all the paramount idea of educating in schools Armenians having lost their sovereignty and their national independence, living under the yoke of a stranger imperialistic state, or dispersed all over the world, and thus lead them to preserve their national dignity and identity. To realize this idea they used all their either material, physical, moral and religious possibilities or available potential and advantages.

The Soviet Armenian historiography and pedagogy, getting round a series of important circumstances, considered their enormous, rich and substantial activities exclusively from the confessional viewpoint, pointing out only their being of service to the Vatican, the citadel of Catholicism. Meanwhile their fruitful enlightening activities of three hundred years, the schools they founded

and their outstanding feats in the sphere of education need supplementary studies, new interpretations, new appreciation and estimation.

First of all they played the role of a huge bridge for dialogue and influences between Armenian and European culture. Mekhitarists' strong connections and affinities with European milieu and culture helped to transfer to them such well organized and methodical ways of activity, thanks to which they created their works in historiography and Armenian studies, their encyclopedias, their descriptions of Armenian antiquities and geography, beautiful printings and many other works. Not only they get acquainted the European civilization with the Armenian nation, but spread the Armenian centuries-old culture with all its splendor and originality in the entire Occident.

Being directly and immediately influenced by the entire human civilization, the Mekhitarists coordinated all the branches of national science and established order within the borders of their studies. Sebastatsi, Alishan, Chamchian, Bagratuni and other great figures in the sphere of Armenian studies and historiography were the authors of first systematic books of grammar, history, geography, bibliography and other sciences; they founded the best schools and printing houses of European type.

Their activities of three centuries were carried out in two main directions: to rediscover and remind the historical values of Armenian people's spirit and thought; and to constantly get connected the national culture with European civilization. The services of Mekhitarists in these two spheres of activity are inestimable, as the spreading of cultural influence is a necessary condition of human civilization development and its perspective path.